ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՇԵՆ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ն ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/40 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
10	Լրակազմն իր մեջ ներառում է սեղան ղեկավարի, կողադիր, տումբա, դիմադիր սեղան, 1 ղեկավարի բազկաթոռ, 8 դիմադիր աթոռներ: Սեղանները՝ պատրաստված բազմաշերտ խտացված MDF–ից: Երեսպատված կաղնու ֆակտուրայով շպոնից, լաքապատված բաց կարմրաշագանակագույն ներկով: Լրակազմի բոլոր քաշվող դարակները գնդիկավոր ուղղորդիչներով են: Ղեկավարի սեղանի չափերը 2800մմx1100մմx760մմ(Երկարությունx լայնությունx բարձրություն): Սեղանի երեսը երեք կտորից մեջտեղում ներկառուցված արհեստական կաշվե հատված:Մեջտեղի հատվածում 550մմx340մմ չափերով քաշվող դարակ: Սեղանի երեսի հաստությունը 88մմ, իսկ ոտքերի հաստությունը 90մմ: Սեղանի դիմային և կողային հատվածներում առկա են նույն MDF նյութից լրացուցիչ ամրացված կտորներ, որոնք ստեղծում են վիզուալ տեսանկյունից 3D էֆեկտ: Սեղանի դիմային և կողային ոտքերի՝ ներքևի մասի ամբողջ երկայնքով առկա է նույն MDF –ից լրացուցիչ ամրացված պրոֆիլապատ շերտ: Սեղանի դիմային գոտին ևս ունի արհեստական կաշեպատ 8 կտորից բաղկացած դետալներ ամրացված հիմնական MDF-ին:Կողադիրի չափերը 1500մմx400մմx670մմ(Երկարությունx լայնությունx բարձրություն): Կողադիրի մեջտեղի հատվածում առկա են 2 քաշվող դարակներ և 1 բաց դարակաշար, իսկ կողային մասերից մեկը բաց դարակ նախատեսված համակարգչի համար՝ մյուս կողմում 1 բացվող դարակ: Տումբայի չափերը 500մմx400մմx670մմ: Այն ունի 3 քաշվող դարակներ, որոնցից վերևինի վրա առկա է կետրոնացված փական: Տումբան և կողադիրը հոլովակավոր անիվներով են: Դիմադիր սեղանը պատրաստված բազմաշերտ խտացված MDF –ից: Երեսպատված կաղնու ֆակտուրայով շպոնից,

	լաքապատված բաց կարմրաշագանակագույն ներկով: Դիմադիր սեղանի չափերը 1200մմx600մմx770մմ(Երկարությունxլայնությունxբարձրություն): Սեղանի երեսի հաստությունը 90մմ, իսկ կողային ոտքերի հաստությունը 70մմ: Սեղանի երկու ոտքերի արանքում առկա է նույն MDF նյութից կապակցման գոտի սեղանի հնարավոր ճոճը թույլ չտալու համար: Բազկաթոռ ղեկավարի՝ ստատիկ ոտքերով 4 գլորվող անիվների վրա, որոնցից 2-ը կանգ ռեժիմով: Պաստառը բնական կաշի: Կառուցվածքը բնական փայտ երեսպատված 35 խտության սպունգով: Աթոռի արմնկակալները և ոտքերը մեկ կտորից են փայտ, կաշի համադրությամբ: Թիկնակը տարբեր աստիճաններում ֆիքսելու հնարավորությամբ: Թիկնակը կողային մասերից երեսպատված փայտի և կաշվի համադրմաբ, իսկ դիմային և ետևի մասերից կաշվով, հաստությունը 15սմ վրայից ևս 5սմ սպունգ և կաշի վրադիր: Թիկնակի բարձրությունը գետնից 123սմ, նստատեղից 80սմ: Լայնությունը ամենանեղ հատվածում 53, իսկ ամենալայն հատվածում 69սմ: Նստատեղի բարձրությունը գետնից 51սմ, խորությունը 53սմ, հաստությունը 13սմ և ևս 5սմ վրադիր: Արմնկակալերի լայնությունը 12սմ, երկարությունը 73սմ՝ ալիքաձև փայտյա: Արմնկակալերի բարձրությունը գետնից 65սմ: Դիմադիր աթոռներ՝ անշարժ փայտյա ոտքերով: Թիկնակի բարձրությունը նստատեղից 68սմ: Թիկնակի հաստությունը 5սմ կաշեպատ և ևս 8սմ սպունգ կաշի վրադիր:Նստատեղի բարձրությունը գետնից 47սմ,խորությունը 52սմ,լայնությունը 50սմ: Նստատեղի հաստությունը 6սմ կաշեպատ և ևս 5սմ սպունգ կաշի վրադիր: Արմնկակալերի փայտի լայնությունը 6սմ, մեջքից մինչև նստստեղ երկարությունը 44սմ: Արմնկակալերը թևերի հենման մասում երեսպատված սպունգով և կաշվին փոխարինողով: Դրանք հանդիսանում են ոտքերի շարունակությունը, ամրանում են և մեջքին և նստատեղին: Աթոռի պաստառը բարձրակարգ կաշվին փոխարինող: * Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: * Ապրանքները՝ չօգտագործված, նոր և որակյալ: * Երաշխիքը 1 տարի: * Խնդրի դեպքում վաճառողը պարտավոր է վերացնել այն իր միջոցներով և իր հաշվին /ներառյալ նաև տեղափոխումը/: Վերջնական գույնը և տեսքը համաձայնեցրած պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ՇԵՆ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/40 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
10	